

* *

Ժէռ, սե՛ քարը սրտիս վրայ,
Գերեզմանիս մուրթ խորշում,
Դարդի սարը սրտիս վրայ —
Քնե՛ր էի Մանթաշում*):

Գարունն եկաւ, Շուշանս եկաւ,
Տատրակի հետ ձէն տուեց.
Տատրակս եկաւ, քարիս նստաւ,
Խնձի անճւշ ձէն տուեց...

— «Ե՛լ, ազիզ ջան, գարունն եկաւ,
Ալ-բալ հագան սար ու ձոր.
Քեզի շաղաղ վարդ եմ բերեր,
Երթանք, ման գանք սար ու ձոր»:

Ե՛լ, ազիզ ջան, Արփաչայի
Ուռիները ծաղկեր են.
Ուռիներէն ճիւղք եմ բերեր,
Քեզի իրենց կը կանչեն»:

Ե՛լ, ազիզ ջան, հոֆն է փշում,
Գառն ու ոչխար սարն ելան.
Ալագեաղը սիրտն է բացեր,—
Ալագեաղին տես երթանք...»

Ա՛խ, Ժեռ քարը սրտիս վրայ,
Խոր, հին վէրքը սրտիս մէջ.
Ու վեր ելնել ես չը կրցայ,—
Սէրն էր մեռեր սրտիս մէջ:

ԱԻ. ԻՍԱՀԱԿԵԱՆ

*) Մանթաշը Արագածի ամենամեծ ձորն է: